

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Ավտոմոբիլային պարկի կառավարման, վերանորոգման և պահպանման
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՄԲԱԿ-ՏԵԽՍՊ-14

ք.Աշտարակ

24 մարտ 2014թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Հ. Գևորգյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Տիգրան Միքայելյանի, որը գործում է որպես անհատ ձեռնարկատեր (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՒՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ավտոմոբիլային պարկի կառավարման, վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածում սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածում սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 1 000 000 մեկ միլիոն ՀՀ դրամ : Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 քանակային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20/4 թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3-(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումները մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ.

2) Կատարողն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

Ծառայության մատուցման ժամկետը կախող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.5 Սույն՝ Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համառոտ պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցություններով միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 և N3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի Ր ա տ ու

ՀՀ Արագածոտնի մարզպետարան
ՀՀ Արագածոտնի մարզ , ք. Աշտարակ Վ.
Պետրոսյան 4
ՀՎՀՀ՝ 05004247
ՀՀ ֆինանսների նախարարության
ձեռնարկային վարչություն
900441041176

Պատվիրակ
Գևորգյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Ա/Ձ Տիգրան Միքայելյան
ՀՀ ք. Աշտարակ, Երևանյան 14
հեռ. (096)722202
«Ինելկոբանկ» ՓԲԸ Աշտարակի մ/ճ
Հ/Հ 2050032083401001
ՀՎՀՀ 54632857
Էլ. հասցեն՝ Tigran-mikayelyan@mail.ru

(ստորագրություն)
Տ. Միքայելյան

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար

1-ին չափ.

1. Նիսան Տիանա
2. Մերսեդես-Բենս C-280

և

2-րդ չափ.

3. Վազ 21214 նիվա
4. Վազ 2106
5. Վազ 21214
6. Գազ 3110101
7. Վազ 21214
8. Պեժո պարս

ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների ըստ տրանսպորտային միջոցների տեխսպասարկման SU-1/տեխզննում և դիագնոստիկա/, SU-2/վերանորոգում/ ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայլուղերի և այլ օժանդակ նյութերի:

ԳՆԱՑՈՒՑԱԿ

		1-ին չափ.	2-րդ չափ.
NN	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայլուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	5-տեղանոց մարդատար առջևի տանող ա/մ	5-տեղանոց մարդատար առջևի տանող ա/մ
1	2	7	
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը		
1	Բոնկման համակարգի ստուգում	3000	2000
2	Սառեցման համակարգի ստուգում	3000	2000

3	Յուղման համակարգի ստուգում	2000	1000
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	5000	2000
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում		2000
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում		2000
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	3000	2000
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	2000	2000
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	2000	2000
13	ABS համակարգի ստուգում	5000	
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	3000	3000
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	3000	
16	Թափքի վիճակի ստուգում	3000	3000
17	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	2000	1000
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը		
18	Շարժիչի հանում տեղադրում		25000
22	Շարժիչի վերականգնում		50000
25	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	8000	4000
29	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	23000	
32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	25000	8000
	2 Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
58	Յուղի և յուղի գոխի փոխարինում	2000	1000
67	Օդի գոխի փոխարինում	1000	1000
69	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	25000	15000
71	Վառելիքի գոխի փոխարինում	3000	1000
	3. Սառեցման և արտածման համակարգ		
76	Հովիարի հանում և տեղադրում	4000	2000
81	Թերմոստատի փոխարինում	4000	2000
82	Ջրի պոմպի փոխարինում	10000	3000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
92	Բանվ.կամ գլխ.գլանի հանում և տեղադրում	5000	3000
94	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում		7000
95	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում		7000
96	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում		7000
97	ՓՏ-ի հանում և տեղադրում		8000
98	ՓՏ-ի վերանորոգում		17000
99	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում		12000
	7. Կախոց		
122	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	35000	
123	Տրավերսի հանում և տեղադրում	30000	

124	Չախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում	4000	
125	Անվակունդի առանցքակալի փոխարինում	4500	
127	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	45000	
129	Չախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	4000	2000
130	Չախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում	4500	3000
131	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	4500	
135	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	4000	2000
137	Ներքևի լծակի վռանների փոխարինում	20000	3000
138	Առջևի աջ կամ ձախ ձգաների հանում և տեղադրում	35000	2000
139	Միջին ձգանի հանում և տեղադրում	5000	3000
140	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	6000	3000
141	Վերևի լծակի հանում և տեղադրում	45000	3000
142	Վերևի լծակի վռանների փոխարինում		3000
143	Գնդե հողակապերի փոխարինում	5000	
147	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	6000	2000
148	Հետևի զսպանակի փոխարինում	45000	3000
149	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	4000	2000
152	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	2000	1000
153	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	7000	
154	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	10000	
	11. Այլ ծառայություններ		
221	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում, գին 1 քառ.դմ-ի համար	15000	10000
223	Անիվի հանում և տեղադրում	1500	1500
224	Անվաղեղի վերանորոգում	1500	1500
225	Անիվի բայանսավորում	1000	1000
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
33	Յուղ շարժիչի հանքային, 1լիտր	2200	2200
34	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1լիտր	4000	2500
35	Յուղ շարժիչի սինթետիկ, 1լիտր	6000	1500
36	Յուղի գտիչ	4000	1500
37	Յուղի պոմպ	25000	6500
53	Օդի գտիչ	5000	2000
58	Արագաչափի տվիչ		2000
59	Հովհարի տվիչ		2000
	3. Սառեցման և արտաձման համակարգ		
70	Ռադիատոր		33000
73	Թերմոստատ		5000
74	Ջրի պոմպի թևակ		2500
75	Ջրի պոմպի առանցքակալ		2500
76	Ջրի պոմպի թևակ	2000	1000
86	Անուր (Խամուտ)	100	100

	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
90	Կցորդման բանվորական զլան		4500
91	Կցորդման գլխավոր զլան		2000
93	Կցորդման տանող սկավառակ		7500
95	Կցորդման առանցքակալ		4000
98	ՓՏ-ի առջևի խցուկ		1000
99	ՓՏ-ի հետևի խցուկ		1000
101	ՓՏ-ի առաջնային լիսեռ		7000
102	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ		7000
111	Տրանամիսսիոն յուղ, 1 լիտր	6200	2000
112	ԱՓՏ յուղ, 1 լիտր	10000	
114	Հերմետիկ	1000	800
	5. Բաշխիչ տուփ, կարգանային լիսեռ		
117	Բաշխիչ տուփի առանցքակալ		3000
121	Էլաստիկ մուֆտ		4500
123	Կարդանային լիսեռի խաչուկի		3000
	6. Առջևի կամ հետևի կամրջակներ		
128	Դիֆֆերենցիալի սատելլիտ		10000
130	Տանող առամուսնիվի առանցքակալ		3500
	7. Կախոց		
137	Տրավերս		20000
139	Չայն կամ աջ հողակալ		3500
141	Անվակունդ		9000
143	Անվակունդի ներքին առանցքակալ		2500
144	Անվակունդի արտաքին առանցքակալ		2500
	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ		2800
145			
148	Հարվածամեղմիչի թասակ	18000	
149	Զայանակ		8000
158	Առջևի կայունարար		8000
159	Առջևի կայունարարի վռան		1500
161	Հետևի զապանակ		10000
163	Հետևի մետաղաձող (շտանգա)		5000
164	Հետևի մետաղաձող (շտանգա) վռան		4500
	8. Ղեկային մեխանիզմ		
175	Ղեկային կայուն		2000
183	Ղեկային ձող		8500
	7. Արգելակային համակարգ		
188	Գլխ. զլան		18500
189	Գլխ. զլանի վերանորոգման կոմպլեկտ		4500
190	Վակումային ուժեղարար		14000
	Բանվ. զլանի վերանորոգման կոմպլեկտ		3500
192			
195	Սուպպորտի մոնժետ		200
	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	25000	3200
196			
	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	25000	7800
197			
199	Առջևի արգելակային սկավառակ		8500
201	Ձեռքի արգելակային ճոպան		3500
	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	2000	1000
203			
	9. Էլեկտրասարքավորում		
206	Գեներատոր		38000
207	Գեներատորի դիողային կամրջակ		3500
208	Գեներատորի ռելե		2000
209	Գեներատորի առանցքակալ		1000

210	Ստարտեր		35000
211	Ստարերի ռելե		1800
212	Ստարտերի անուխ		1500
213	Բենդերս		4000
215	Առջևի լապտեր		4500
217	Հետևի լապտեր	30000	8000
220	Լամպ	300	300
224	Բռնկման կողպեք		5500
225	Էլեկտրալարերի գլխավոր խուրց		15000
226	Էլեկտրալարերի երկրորդային խուրց		13000
230	Վազբաչափի ճոպան		2000
232	Ազդանշան		8000
234	Ապակեվազիչի շարժիչ		10000
235	Դռների կենտրոնական փական		2500
Ծառայության մատուցման ժամկետը			
Սկիզբը		ավարտը	
Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը		2014թ. դեկտեմբերի 25	

Պ ա տ վ ի Ր ա տ ու

ՀՀ Արագածոտնի մարզպետարան
 ՀՀ Արագածոտնի մարզ , ք. Աշտարակ Վ.
 Պետրոսյան 4
 ՀՎՀՀ՝ 05004247
 ՀՀ ֆինանսների նախարարության
 գործառնական վարչություն
 Հ/Հ 900441041176

Աշխատակազմի ղեկավար՝
 Ստորգյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Ա/Ձ Տիգրան Միքայելյան
 ՀՀ ք. Աշտարակ, Երևանյան 14
 հեռ. (096)722202
 «Ինտերանկ» ՓԲԸ Աշտարակի մ/ճ
 Հ/Հ 2050032083401001
 ՀՎՀՀ 54632857
 էլ. հասցեն՝ Tigran-mikayelyan@mail.ru

(Signature)
 S. Միքայելյան
 (մտորագրություն)

N ՀՀԱՄԲԱՀ-ՏԵԽՍՊ-14 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

«Որպես»

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Ավտոմոբիլային պարկի կառավարման, վերանորոգման և պահպանման ծառայություններ ՍՈՒԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԵՐ			200 000	283 000	366 600	450 000	550 000	650 000	750 000	833 300	916 600	1 000 000	1 000 000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ածողական կարգով:

Պ ա տ վ ի Ր ա տ ու

«Արագածոտնի մարզպետարան»
 «Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ Կ.
 Պետրոսյան 4
 ՀՀՀՀ՝ 05004247
 «Ֆինանսների նախարարության
 գործառնական վարչություն»
 900441041176

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Ա/Ձ Տիգրան Միքայելյան
 «Աշտարակ, Երևանյան 14
 հեռ. (096)722202
 «Ինտերանկ» ՓԲԸ Աշտարակի մ/ճ
 Հ/Հ 2050032083401001
 ՀՀՀՀ 54632857
 էլ. hwaugtn' Tigran-mikayelyan@mail.ru



Ստորագրված է ղեկավար՝
 Գևորգյան

Ս. Միքայելյան
 (տնօրագրություն)

N ՀՀԱՄԲԸԱԿ-ՏԵԽՍՊ-14 ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող

գտնվելու վայրը _____
hh _____

հվհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
hh _____

հվհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<< _____ >> << _____ >> 20 թ.

Պայմանագրի

անվանումը

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ << _____ >> << _____ >> 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ _____

ի

դեմս

և Կատարողը՝ _____

դեմս _____

հիմք
ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը _____ 20 թ-ից _____ 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)

Ընդամենը

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

Աշխատանքը ընդունեց

_____ ստորագրություն

_____ ստորագրություն

_____ Ազգանուն, Անուն Կ.Տ.

_____ Ազգանուն, Անուն Կ.Տ.